ՆԱԽԱԳԻԾ
Երկրորդ ընթերցում

Կ-1014-25.02.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տրանսպորտի մասին» 1998 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-201 օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մասով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Կառավարությունը տրանսպորտի առանձին տեսակներով իրականացվող ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների զարգացման նպատակով կարող է նոր տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, ինչպես նաեւ ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների ծավալները ավելացնելու համար ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար հաստատել աջակցության ծրագրեր:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: